

մարը, որուն մէջ գգալի կերպով բազմա-
ցած կը տեսնուի Վաղղիոյ բնակչաց
թիւը: Եւ խիստ թաց աշխարհաճամարն,
որ 1856 տարւոյն եղաւ, Վաղղիա ունէր
86 գաւառ և 36,039,364 բնակիչ: Իսկ 1
յունուարի 1862 ամին, Վաղղիա ունի
89 գաւառ և 37,382,225 բնակիչ: Ըսել
է թէ 1857 տարիէն ինչուան 1861 տա-
րուան հնգամեայ շրջանին ժամանակ
Վաղղիա աճեր է 1,342,861 կամ 3.72
առ % բնակչօք: Եւ թիւէն հանելով
նոր գաւառաց բնակիչքն, որ են 669,059
ոգիք, հին գաւառաց բնակչաց աճումը
կ'ըլլայ 673,802 ոգիք կամ 1.86 առ %:

Եւ խիստ թաց հնգամեայ երկու շրջա-
նաց մէջ այս աճումն աւելի նուազ էր.
ինչպէս 1846 տարիէն ինչուան 1851,
աճումն էր 382,684 ոգիք, կամ 1.08
առ %: և 1851 տարիէն մինչև 1856, ա-
ճումն էր քիչ մը նուազ քան զվերագոյն
թիւը: Իսկ 1861 տարւոյն աշխարհա-
ճամարը գրեթէ կրկին աճումն կու
տայ:

Եւս բանիս պատճառը դիւրին է
ըմբռնել, վասն զի նախընթաց շրջանին
ժամանակը շատ մը ձախող պարագա-
ներ վրայ եկան, ինչպէս էին գլխաւո-
րապէս հնձոց անբուականութիւնն ու
փոխադրական հիւանդութիւններն.
հասարակաց զարգացմանը բարօրու-
թեան ազդեցութեամբն երկրի մը
բնակիչքը կանոնաւոր կերպով կը սկը-
սին աճել:

Ինչ 1851 տարիէն ինչուան 1856,
միայն 32 գաւառք յաճման էին. 1861
տարին 57 գաւառք յաճման են, և 29
գաւառք ի նուազման, ուր 1856 տարին
54 գաւառք էին ի նուազման:

Եւ ժաման Վաղղիոյ քաղաքական
վիճակը կը բաժնուի 89 գաւառ¹, 373
դէհք², 2,938 վիճակ³ և 37,540 շինա-
վայրք⁴. որոնց բնակչաց գումարն է
37,382,225 ոգիք: Իսկ Վաղղիի կը բա-
ժնուի երեք գաւառ, և ունի 2,677,973

բնակիչ: Որով կ'ըլլայ Վաղղիա և Վա-
ճերի ընդ ամէնը 40,060,198 բնակիչ:
Եւսնցմէ իւր 1,500,000 բողոքականք
են, 100,000 հրէայք, Վաղղիի 2,470,
000 մահմետականք, մնացածը հռոմ-
մէական կաթոլիկեայք:

Վաղղիոյ բնակիչքը դաս դաս բա-
ժնելով. են արուք՝ 18,642,504, էգք
18,739,721: Եւսնք. արուք՝ 10,210,
756. էգք՝ 9,487,541: Եւսնացեալք.
արք՝ 7,503,024, կանայք՝ 7,457,125:
Եւսնք. արք՝ 928,724. կանայք՝ 1,795,
065:

Նոր տեսակ կենդանի մը:

Եւսնական երբ հասարակ չէր ե-
ղած ուսման ժողովրդեան մէջ ժամա-
ցուցի գործածութիւնը, շատ տեղ չէին
գիտեր անոր ինչ ըլլալը. որ մը մէկ
աղքատ և տխմար գեղջուկ մը երբոր
հօտը արածելու կը տանէր, ճամբան
մէկ ոսկի ժամացոյց մը կը գտնէ, որ
ձիաւորի մը ծոցէն ընկեր էր քիչ մը
առաջ, երբ յոգնած դադրած իջեր
ծառի մը շուքին տակ հանգչեր էր, և
յետոյ առանց ուշադրութեան ելեր
շարունակէր էր ճամբան: Հովիւր որ
ոչ երբէք ժամացոյց տեսեր էր՝ զար-
մացմամբ գոչեց. — Ո՛հ, ինչ կրնայ
ըլլալ ասիկայ որ ինքնիւրեն կը խլար
և կարծես թէ շունչ կ'առնու. — ա-
կանջին կը մերձեցնէ զայն, ու կ'ըսէ.
— Հոս ալ տարակոյս չկայ. ասոր մէջ
պէտք է որ կենդանի մը ըլլայ. և որչափ
ալ ասդին անդին դարձնեմ ու կրկին
կրկին դիտեմ զայն, այնչափ միտքս կը
հաստատուի որ ասիկայ հաւկիթ մը
ըլլայ. չըլլայ թէ մէկալ որ տեսնուած
մեծ թռչունը, որ մեր կողմերն անծա-
նօթ էր, ածած ըլլայ այս հաւկիթ
ասկէ անցնելու ժամանակը: — Ուստի
բնութեան այս նորուսը բոլորովին խորն
ընկղմած իր նորագիւտ մտածութեան
ցը, առանց կարող ըլլալու որոշել թէ

1. Գլ. Département.
2. Գլ. Arrondissement.
3. Գլ. Canton.
4. Գլ. Commune.

անոնցմէ որ մէկուն միտքը պատկեցրնէ, ալ ինչ կրնամ ըսել, որ սաստիկ մտածելէն արդէն գլուխն սկսեր էր դառնալ. և օգնութեան կանչեց ուրիշ քանի մը հովիւներ՝ որոնք այնչափ տեղեակ էին բնաբանութեան սկզբանց որչափ ինքը գիտէր: Ինոնցմէ և ոչ մէկը կրցաւ տեսնել որ ժամացոյցը բանալի մը ունէր. վերջապէս ժամ մը շաղկապիւնէն և շաղակրատելէն վերջը, խօսքը ժամացուցին վրայ դարձաւ, և ամենուն կարծիքը հարցուեցաւ. մէկն ըսաւ թէ ինչու կեցեր ենք և չենք բանար զայն: Ինքուննի թուեցաւ այս գռեհիկ ժողովականացս այն առաջարկը, և միաբերան որոշեցին որ պէտք է քարով մը խորտակել ապակին որպէս զի աւելի դիւրաւ և աւելի լաւ կերպով մէջը տեսնուի. ըսելնին ու ընելնին մէկ եղաւ. իւրաքանչիւր գեղջուկ մէյմէկ քար առին ու կարգաւ ետեւէ ետեւ ժա-

մացուցին զարկին. այնպէս որ քիչ ատենէն ապակին ու ցուցակը կտոր կտոր եղան, և այնպէս ջախջախեցաւ ժամացոյցը որ դադրեցաւ բանելէն. ասկէ հետեւցուցին որ կենդանին սատկեցաւ, ու սկսան յօշել զայն: Ինչիւնեք, շրջեցին ու զսպանակները՝ բոլորն ալ կենդանւոյն աղիքն ու փորոտիքը կարծեցին և այնչափ աղմուկ փրթաւ գեղին մէջ, որ որչափ շաղակրատ պառաւունք կային այն մօտերը ու թօրիշ բան չէին խօսեր, բայց եթէ այս նոր և ստոյգ գիւտիս վրայ:

ԿՈՄԾԻ

Նիկողոս զբժիշկ ոմն բարեբաղդ անուանէ ասելով թէ զյաջողութիւն և զմանկաբաղդութիւն քո արեգակն տեսանէ, իսկ զսխալանսն և զվնասն՝ երկիր ծածկէ:

Ի ԾԱՂԿԱԶԱՐԴՆ

Հրրձուի այսօր Լորուսաղէմ եւ զուարճանայ,
Օ ի նոգ զարդարեալ դրրունս՝ Վրիստոս ի նա նթանայ,
Յաւանակի խոնարհ նըստեալ փրկիչ արքայ.
Լքբայեցուոց երամ երամն ընդ առաջ գայ:

Ի ձիթենեաց լեռնէն մանկունք տարածանէն
Հանդերձս, եւ ծերք ծաղկեալ ոստովք ի յոտս յառնեն.
()Րհնեալ եկեալ անուամբ փրկիչ Լստուած որ էն,
Լա ալէլուիա, որ գալայդ ես, Վաւթեան զարմէն:

Ս երաբազմեալդ ի քերովբէս, ցուցեալ արդ մեզ,
Ինկալ ըզձօնս զուռս ձիթենեաց՝ նըւիրեալ քեզ,
Ի յանդադար ձայնըս սրբոց յերգըս պէսպէս:

Հապա մանկունք եկեղեցւոյ նոր Սիոնի,
Յաղերս Որդւոյ մատիցովք Լոյծ մօր միածնի,
Որ ի վերջին աւուրքս յաթող փառաց բազմի:

Հ. Ա. Վ. Ճ.